# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 9-ին, ուշ երեկոյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Հայաստան ժամանած Մեծ Բրիտանիայի արտաքին և համագործակցության գործերի պետական քարտուղար տիար Մալքոլմ Ռիյթինդին՝ ուր հոգուց կազմված պատվիրակության հետ: Մեծարգո հյուրին ուղեկցում էին ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը, Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը, Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Դեյվիդ Միլլերը և պաշտոնական այլ անձինք:

Վեհափառ Հայրապետը ողջունելով պատվիրակության առաջին այցելությունը Հայաստան, կարևորեց նրանց առաքելությունը:

Հարգարժան նախարարը հետաքրքրվեց Հայ Եկեղեցու կրոնական և ազգային դերակատարության խնդրով: Վեհափառը լայն բացատրություններ տվեց և ապա անդրադարձավ հատկապես երկու երկրների՝ Անգլիայի և Հայաստանի միջև եղած և այսուհետև մշակվելիք սերտ հարաբերություններին և համագործակցությանը: Խոսվեց Ս. Էջմիածնի և Քենթրբերիի արքեպիսկոպոսության միջև եղած ջերմ բարեկամական հարաբերությունների մասին:

Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ պատվիրակության Հայաստան կատարած այցելությամբ կսզբնավորվի փոխշահավետ համագործակցություն, որը կնպաստի նաև մշակութային հարաբերությունների ընդլայնմանը: